ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 651-Ա « 09 » փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ Հ.29 ՀԱՍՑԵՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՄԱՍՏ ՎԱՐԴԵՎԱՆԻ ՔՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 23.01.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ի կողմից 11.09.2025թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով ինքնակամ կառույցների արտաքին չափերի վերաբերյալ «ԱԼԲԻՈՒԱՖ» ՍՊԸ-ի կողմից 11.11.2024թ. եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի 30.08.2024թ. հ.ԱԳ/14120-2024 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի դիմումները (12.09.2024թ. հ.Դ-115708-24, 18.11.2024թ. հ.Դ-146171-24, 14.01.2025թ. հ.Դ-3558-25, 24.02.2025թ. հ.Դ-20029-25, 06.08.2025թ. հ.Դ-85031-25, 12.09.2025թ. հ.Դ-100758-25, 20.10.2025թ. հ.Դ-115767-25, 24.11.2025թ. հ.Դ-130056-25).

1. Երևան, Ավան, Ավան 4-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.29 հասցեում՝ սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.04.2024թ. հ.11112024-01-0070 վկայական) քաղաքացի Ալմաստ Վարդևանի Քոսյանին պատկանող հողամասում գտնվող ինքնակամ իրականացրած 256.56 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի /նկուղ՝ 6.9 քառ.մետր, առաջին հարկ՝ 121.7 քառ.մետր, ծածկոց՝ 10.16 քառ.մետր, երկրորդ հարկ՝ 86.1 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 31.4 քառ.մետր/) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 966356 (ինը հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ